ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

THE DEPUTY MINISTER OF MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA-HEAD OF LOGISTIC SUPPORT DEPARTMENT
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЧАЛЬНИК ДЕПАРТАМЕНТА МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ

0044, ք. Երևան, Բագրևանդի փ.5
E-mail: spitak151@rambler.ru
Հեռ. (+37410) 29-43-97
Ֆաքս (+37410) 29-46-13

5 Bagrevand str.,0044 Yerevan
Ереван, 0044, Багреванда 5
E-mail: spitak151@rambler.ru
Tel. Тел. (+37410) 29-43-97
Fax. Факс (+37410) 29-46-13

№ ԴՄ/ՆՏ/2419

«05» 09 2014թ.

«Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն Ա. Դանիելյանին
ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27, բն 6
էլ. հասցեն՝ hanesh-group@yandex.ru
հեռ. 010-61-17-06, 091-40-40-94

Հարգելի պարոն Դանիելյան

Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության և «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.04.2014թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/17-1 ծածկագրով գնման պայմանագրի՝ Ձեր ընկերությունը 2014թ. մայիս, հունիս, հուլիս, օգոստոս ամիսներին պետք է մատակարարեր «ածելի մեկանգամյա օգտագործման» ապրանքատեսակը:

Հիմք ընդունելով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության 28.08.2014թ. ելք դ/թ 946 և ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության 15.08.2014թ. N 514/19816 գրությունները, ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ վերոնշյալ պայմանագրի 3.1.7.1 կետի ա/ և բ/ ենթակետերի համաձայն, 2014թ. սեպտեմբերի 5-ին միակողմանի մասնակի լուծում է 23.04.2014թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/17-1 ծածկագրով գնման պայմանագիրը՝ 335 980 հատ «ածելի մեկանգամյա օգտագործման» ապրանքատեսակի մասով: Միակողմանի մասնակի լուծման արդյունքում 23.04.2014թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/17-1 ծածկագրով գնման պայմանագրի ընդհանուր գումարը նվազում է 11 423 320 /տասնմեկ միլիոն չորս հարյուր քսաներեք հազար երեք հարյուր քսան/ ՀՀ դրամով և կազմում է 88 084 387 /ութսունութ միլիոն ութսունչորս հազար երեք հարյուր ութսունյոթ/ ՀՀ դրամ:

Տեղեկացնում ենք, որ սույն ծանուցումն ստանալուց հետո՝ պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, դուք պարտավոր եք 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005240511 հաշվեհամարին փոխանցել 10 667 609.7 (տաս միլիոն վեց հարյուր վաթսունյոթ հազար վեց հարյուր ինը ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամ, որից 9 950 770.7 (ինը միլիոն ինը հարյուր հիսուն հազար յոթ հարյուր յոթանասուն ամբողջ յոթ տասնորդական) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը), 219 300 (երկու հարյուր տասնինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամը՝ որպես տույժ ուշացված օրերի համար (պայմանագրի 7.2 կետի համաձայն) և 497 539 (չորս հարյուր իննսունյոթ հազար հինգ հարյուր երեսունինը) ՀՀ դրամը՝ որպես տուգանք պայմանագրով ստանձնած պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար (պայմանագրի 7.4 կետի համաձայն):

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ